

«ՎՇՏԱՊԱՏՈՒՄ» ԱՆՏԻՊ ԷԶԵՐԸ*

1915 թվականին Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված և իրականացված Հայոց ցեղասպանությունից մազապործ հայ փախստականների շրջանում Հայ Յեղափոխական Դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեն 1916թ. ձեռնարկել է տեղեկությունների հավաքագրում՝ «Վշտապատում» ընդհանուր խորագրով:

Նախաձեռնությունն իրագործողներից Հայկ Աճեմյանը, Համբարձում Գալստյանը, Գարեգին Թուրիկյանը, Ա. Հացագործյանը, Մուրեն Մելոյանը, Գ. Ներկարարյանը, Շիրին Հակոբյանը, շրջելով արևմտահայ փախստականների նոր բնակավայրերը, Բաքվի, Թիֆլիսի, Դիլիջանի ու Աշտարակի որբանոցները, հավաքագրել են կոտորածների ականատեսների ու բռնությունների անմիջական գոհերի վկայություններ՝ համաձայն նախապես մշակված հարցաթերթի: Հարցաթերթը կազմված էր այնպիսի կետերից, որ հնարավորություն էր ընձեռում ճշգրիտ տեղեկություններ հավաքագրել ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ու մշակութային արժեքների կորուստների վերաբերյալ: Նման եղանակով գրի առնված և վերջում հարցվողների ստորագրությամբ վավերացված վկայությունները խիստ արժեքավոր տեղեկություններ են պարունակում Եղեռնին նախորդող ժամանակահատվածի և Մեծ եղեռնի մասին: Դրանց համակողմանի ուսումնասիրությունն ու փաստերի համադրումը ստեղծում է ամբողջական պատկեր, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է երիտթուրքերի վարչակարգի կողմից վաղօրոք ծրագրված, մանրակրկիտ կերպով նախապատրաստված և իրականացված Հայոց ցեղասպանության փաստը:

Հաշվի առնելով «Վշտապատումի» նյութերի կարևորությունը՝ միջազգային հանրությանը ճշգրիտ ու հավաստի տեղեկություններ հաղորդելու և ահազանգ հնչեցնելու համար, դրանց մի մասը ժամանակին տրամադրվել է Բաքվից՝ Թեհրանի վրայով Եգիպտոս, իսկ այնտեղից էլ Եվրոպա մեկնող Չապել Եսայանին: 1916 թվականի ապրիլի 3-ին Բաքվից Եգիպտոսի դաշնակցականներին գրած իր նամակով ՀՅԴ առաջնորդ Ռոստոմը հանձնարարում էր. «Տիկինը իր հետ բերում է «Վշտապատումի» նիւթերը: Պէտք է օգտուել լայն պրոպականտի համար: Տիկինը ինքը կ'աշխատի: Յոյս ունեն, որ հարկ եղած դիւրութիւնները չէք զլանալ»¹:

«Վշտապատում» ընդհանուր խորագրով բարեխիղճ կերպով հավաքված

* Ընդունվել է տպագրության 20.03.2010:

¹ Ռոստոմ. Նամակահի, Պէյրուք, Գամազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1999, էջ 628-629:

վկայությունների մի մասը՝ շուրջ 700-ը, այսօր պահպանվում է Հայաստանի ազգային արխիվի «Մշակի» խմբագրության ֆոնդում: 2005 թվականին Հայաստանի ազգային արխիվը լույս է ընծայել «Վշտապատում» փաստաթղթերի ժողովածուն², որում ընդգրկվել են Հայոց ցեղասպանության մոտ 180 ականատեսի վկայություններ: Ներկայումս պատրաստվում է այդ ժողովածուի լրացված և ծանոթագրված վերահրատարակությունը:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը հրապարակվում են առաջին անգամ, բնագրի լեզվով, առանց ոճական շտկումների:

*Ամատունի Ս. Վիրաբյան
պարմ. գիր. դոկտոր
Գոհար Գ. Ավագյան
պարմ. գիր. թեկնածու*

Unpublished pages of “VSHTAPATUM”

*Amatuni S. Virabyan
Gohar G. Avakyan*

Ի(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ *համահայկական համոթես*

2 Տե՛ս Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ականատեսների աչքերով, Եր., «Զանգակ-97», 2005:

ԱՎԱՆԱՏԵՍ ՄՈՒՇԵՂ ՈՐՔԵՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՐՔԵՐԳ-ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

15 Մայիսի 1916 թ.

Եփրատ Գօլէճի³ պրօֆեսոր Որբերեանի⁴ որդւոյն
Մուշեղ Որբերեանի պատմութիւն, 18 տարեկան

1915 ապրիլ 30-ին էր, որ կառավարութիւն առաջին քայլը արաւ Խարբերդի հայութեան բնաջնջման: Այդ օրը ձերբակալուեցան քաղաքի բոլոր յայտնի անձնատրութիւնները: Շարունակուեցաւ ձերբակալութիւնները մինչև յունիս ամիս, մնացած էին դուրս միայն մի քանի անձնատրութիւնը, որոնց թոյն հայրս: Երեւի անոնք թողուած էին աւելի վատ բախտի համար:

Յունիս 15-ին էր, որ մեր տունը մտնելով, քաղաքավարութեամբ բարևելով, քաղաքապետին կողմէն խնդրեց հօրմէս գնալու կառավարութեան շէնքը տեսակցութեան մը համար: Ժամը 12-ին վերադարձաւ կիսամեռ վիճակի մէջ, ինկաւ թիկնաթոռի մը վրայ, կարծես կը զառանցէր. «Մեր ներկայութեան հայեր զանակոծուեցան, ես չեմ կարող դիմանալ ատոր»:

Յաջորդ օրը հայրս փոխադրուեցաւ Ամերիկեան հիւանդանոցը, արիւնը գլուխը խուժած էր: 15 օրէն բաւական առողջացաւ, հրամայուած էր քստոր դէպի Ուրֆա, Մալաթիայի ճանապարհով: Մենք և մեր բարեկամները ունէինք 40 էշեր և 4 կառքեր բեռքուած թանկարժէք իրեղէններով:

Յուլիս 3-ին Խարբերդի 3000-նոց կարաւանը ճամբայ կելլէր, նահանգապետը իր կնիքով կնքրտուած յանձնարարական նամակներ կուտար Ուրֆայի կառավարութեան մեզի լաւ ընդունելութիւն տալու համար, թիւրք երեսփոխանները (Օսմ[անական] երեսփոխանական] ժողովի) նոյն պէս յանձնարարականներ կուտային, Ուրֆայի զանազան ազդեցիկ թուրքերի վրայ նոյն նպատակով:

Ժողովուրդը ուրախ էր, որ գէթ կը հեռանայ և մի առ ժամանակ կազատուի թուրքերու հարստահարութիւններէն:

100 ժանդարմ և 3 ժանդարմական սպաներ մեզի կընկերանային, իբր թէ կարաւանի ապահովութեան համար: Օրական 4 ժամ միայն կը ճամփորդէինք: Առաջին երկու օրերը շատ հանգիստ էինք, իսկ երրորդ օրը մահուան սարսափը զգացինք:

Կարաւանը Եփրատի եզերքը կանգ առաւ ... Հայու հաւատարիմ Եփրատը, իբրև նախազգուշութիւն, մերթ ընդ մերթ սկսաւ ցոյց տալ մեզի բաղադակիցներու դիակներ, որ իր ալիքներու վրայ առած կը տաներ դէպի հեռատր Հնդկաց օվկիանոսը...

Բայց, աւաղ, անգլուխ դիակները մեր աչքերը բանալու և մեր վախճանը

3 Եփրատ քուլեջ, հիմնվել է 1878-ին, Խարբերդում, ամերիկացի միսիոներ Բ. Դոյլըրի կողմից: Մինչև 1888 թ. կոչվել է Կրմենիա քուլեջ: Փակվել է 1915 թվականին:

4 Որբերյան Սկրտիչ Ս.- ուսուցչապետ, ծնվել է 1868 թ. օգոստոսի 24-ին, Մալաթիայում, ուր իր նախնական ուսումը ստանալուց հետո սովորել է Եփրատ քուլեջում: Բ. Դոյլըրը հաշվի առնելով նրա բնութագիրն ու գիտելիքները՝ ուսուցչութեան է հրավիրել նույն քուլեջ: Եփրատ քուլեջի 25-ամյակի առիթով նրան շնորհվել է ուսուցչապետի տիտղոս: Քուլեջի կողմից ուղարկվել է Ամերիկա, որտեղ Բրիսթըն համալսարանում մեկ տարի ուսումնասիրել է իր նախընտրած ճյուղերը: Գնաաշխարհային պատերազմը սկսվելուց հետո վերադառնում է Խարբերդ:

ցոյց տալու չափ համոզիչ չեղան ...

Յոգնած ու դադրած հազիւ նստած էինք՝ քիչ մը շունչ քաշելու, հայրս այլայլուած ու աչքերը արիւն լեցուած՝ եկաւ 14 տարեկան քրոջս մօտ և ըսաւ. «Աղջիկս, հայրդ կը նախընտրէ իր բարեկամներով կոտորուիլ, ոչնչանալ, քան թէ քեզի շան մը ձեռքը յանձնիլ: Գնանք, գետը մօտ է, նա կարող է մեզ ամենքիս ալ կոլ տալ ու փրկել շուներուն նախատինքից, լաւ [է] մեռցնել ֆիզիքականը, անաղարտ պահելու համար բարոյականը»: Հայրս պատմեց, թէ երեք սպաներից մին, տեսնելով գեղեցիկ քրոջս, գայն կնութեան կուզէ՝ խոստանալով ազատել մեզ և մեր բարեկամները:

Կարաւանին մէջ տիրեց ընդհանուր շփոթութիւն, իւրաքանչիւր ոք կսբասեր նոյն ձևով առաջարկութիւն իր սիրած կնոջ, աղջկան և քրոջը համար, ամէն ոք փախուստի մասին կը մտածէր: Նոյն սպան, կռահելով շփոթութիւնը, հայրս իր մօտ կանչելով՝ յայտնեց, որ իր ըրածը պարզ առաջարկութիւն մըն էր:

Նոյն գիշեր 10 ժանդարմներ մտնելով հիւանդանոց, պահանջեցին 500 ոսկի, անմիջապէս կը հաւաքուի և կը տրուի:

Գետի փոքր նաւակներով 4 օրէն հազիւ կարողացաւ կարաւանը անցնել միւս ափը:

Մեր արքայանքի 7-րդ օրն էր, կէս գիշերին էր, որ դիմակները վար առնուեցան, վայնասունը և աղաղակը երկինք կը բարձրանար: 20-ի չափ ժանդարմներ, մտած կարաւանին մէջ, դրամ գտնելու համար խուզարկութիւն կը կատարէին, ծեծելով և կոխկրտելով մարդիկ, կանայք և երեխաները: Դրամը գտնելու պատրուակաւ կը մերկացնէին և կը բռնաբարէին կիներ և աղջիկներ:

Յոյսերնիս կըտրուած՝ դեպի գետը վազելու ատեն, ժանդարմները մեր առջևը կտրեցին և բռնի ետ դարձուցին, համոզելով, թէ անոնք քիւրդեր էին, սկսեցին հրացանները կրակել օդին մէջ և իբր թէ քիւրդերը փախան:

Առատտեան երբ լուսացաւ, ժողովուրդը մոռցած իր կրած ծեծը և ֆիզիքական տանջանքը, իւրաքանչիւրը կը ողբար իր բռնաբարուած պատիւը: Քոյրս խնդրող սպան, այլ ևս իր սեփականութիւնը համարելով գայն, առանց մեր գիտութեան, կը պաշտպանէր մեր վրանները ժանդարմներուն յարձակումներէն:

Նոյն միջոցին կարաւանէն զատեցին 8 նշանատր անձինք, իբր թէ նահանգապետը զանոնք ուզած է, հայրս ալ նրանց հետ էր, բայց սպան մտածելով, որ հօրս ազատելը կարող է միջոց լինել քրոջս տիրանալու, ետ առաւ անոնց շարքերէն, մնացած 7-ը տարին: Եփրատը՝ մեր կարաւանին առաջին զոհերը առած կը տանէր ...

Փախուստի փորձերն այլևս անօգուտ էին, բազմաթիւ չէքաներ⁵ մեզ շրջապատած էին, ով որ կարաւանէն ետ կը մնար կը մորթուէր, այսպէս 25 զոհեր ունեցանք մինչև Մալաթիայ:

Մեր մահավճռի գործադրութենէն երկու օր առաջ, մեզ կրկին վստահութիւններ շնչելու և անզիտակ պահելու նպատակաւ, հրամայուեցաւ ժանդարմներուն զնդակահարել քիւրդերին, հրամանը կատարուեց և մի քանիսը զնդակահարուեցան, իբր թէ նրանց կողոպուտէն մեզի պաշտպանելու համար:

Վերջին իրիկունն էր, կարաւանը անզիտակ վաղուայ մասին, միայն հայրս հասկըցած էր սպային արտայայտութիւնէն, գալոց աղէտքը: Իրիկուան

5 Չեթաներ՝ ավազակախմբեր:

ընթրիքէն յետոյ սպահն ծառէն գտաւ մեր վրանը և կեանքի սպառնալիքով պնդեց, որ եթէ խոստանայ քոյրս սպային տալ, կառքերը պատրաստ են և ամենքիս պիտի փախցնեն: «Վաղը առաւօտուն, երբ ես խողխողուած կը լինեմ այն ատեն միայն աղջիկս կարող է առնիլ»: Սպան, իր սպառնալիքը չ'գործադրէր, ներս կը մտնէ. «Քեզի մեղք կըլլայ» (սանա եագք օլուր) ըսելով, կանյայտանայ այլևս չերևալու պայմանաւ:

Առաւօտուն կարաւանը կը քալէ դեպի սպանդանոցը, Մալաթիայէն 3 ժամ հեռու Չիւֆթլիկ⁶ ըսած տեղը, քաղաքին առջևնին, մեզմէ քիչ անդին սկսեցին զատել 12 տարեկանէն վեր արուները, զատեցին ամենքը և լեցուցին մօտակայ գօրանոց մը, հնարաւորութիւն չունէին բաժանողները՝ նոյնիսկ վերջին մնաս բարեալը ըսելու, ժանդարմները բռնի կը հեռացնեն, ամենէն առաջ բանտը քշողներու հետ էի, կսբասեի մերիններուն, հայրս և բարեկամները կը մտնին ներս: Սպան միջամտած էր գաւառապետին մօտ ինծի համար և զիս դուրս հանեցին՝ առանց վերջին անգամ հայրս և բարեկամներս համբուրելու: Ամբողջ կիները և երեխաները մնացած էին հիւրանոցները և փողոցները, մահմեդականները իրատունք ունէին իրենց ընտրութիւնը ընելու, քոյրս յափշտակած էր յիշեալ սպան:

Բանտարկուածներէն զոնէ մեկ մարդ չազատուեց, որ նրանց եղեռական պատմութիւնը իմանայինք...

Մուշեղ Որբերեան

ՀԱԱ, ֆ.227, ց.1, գ.489, քթ.1-6, բնագիր, ձեռագիր:

N 2

ԱԿԱՆԱՏԵՍ ՊԵՏՐՈՍ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՐԲԵՐԳԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՇՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԲԱՅԱՍԱԿԱՆ ԳԵՐԻ ՄԱՍԻՆ

16 մայիսի 1916 թ.

Խարբերդ Գերմանական միսիօնին մէջ աշխատող պատուելի
Պետրոս Յակոբեանի տեղեկութիւնները

1896 թուականին թողելով Ամերիկեան միսիօնի հետ իմ ունեցած աշխատութիւնս, անցայ Գերմանական միսիօնը, որ ատեն Գերմանական միսիօնը նոր հաստատուած էր Խարբերդ, գնդապետ պարոն Էյմանի նախագահութեամբ՝ յատկապէս որբանոցներ բանալու համար, յետոյ արդէն ձեռնարկուեցան միսիօնարական այլ աշխատութիւններ:

Ուրեմն ամբողջ 20 տարի աշխատած եմ այդ հաստատութեան մէջ, որքան իմ կարողութիւններս կը ներէին, միշտ հաւատալով թէ զուտ քրիստօնէական և բարեգործական առաքելութիւն մընէ, այսօր ալ նոյն համոզումը ունիմ այդ հաստատութեան վերաբերմամբ:

Տեղահանութեան վերաբերմամբ շատ լսած կը լինեք, գրեթէ նոյնանման են

6 Չիֆթլիգ անունով գյուղ է եղել Խարբերդի զավառի Ակն զավառակում, բայց այստեղ, հավանաբար, վայրի անվանումը կապված է Չիֆթլիգ գետի հետ, որը Եփրատի աջակողմյան վտակն էր և սկիզբ էր առնում Մալաթիա քաղաքից հարավ-արևելք ընկած Վանքի լեռներից, հոսում Մալաթիայի շրջանով:

ամեն տեղ, կարևոր է յիշատակել մի քանի յատկանշական դեպքեր, որոնք կարող են պարզաբանել տեղահանության միջոցին օտարներու ունեցած բացասական վերաբերմունքը:

1. Տեղահանութիւնը սկսելէ առաջ, երբ սկսուեց ձերբակալութիւնները, յատկապէս կուսակցական առաջնորդներու, ներքո քաղաքներ[ում] (Խարբերդ և Մէզրէ⁷) և յետոյ ամբողջ շրջան[ում], մեզի այնպէս հաւատացուցին, թէ կառավարութիւնը, և թէ պարօն Էյմանը, որ այս ձերբակալութիւնները և հալածանքները յատկապէս ուղղուած են կուսակցութիւններու դէմ և ժողովրդին ոչինչ չպիտի լինի: Անշուշտ կառավարութեան յայտարարութիւնը չէր կարող վստահութիւն ներշնչել, եթէ պարոն Էյմանի նման մի անձնատրութիւն այդ ձևով չվստահացներ մեզ, նոյնիսկ պատուելի Վարդան Ամիրխանեանը բացարձակապէս համոզուած այդ յայտարարութեան, կիրակի օրուան քարոզի ընթացքին «աչքի լոյս»-ի ձևով յայտնեց ժողովուրդին, թէ «բոլոր հալածանքները ուղղուած են կուսակցականներու դէմ և ժողովուրդին ոչինչ չ'լիներ»: Հարկաւ սարսափահար ժողովուրդը ընդունեց իբրև ճշմարտութիւն:

2. Ձերբակալութիւններու հետ միաժամանակ սկսուեց կառավարութեան կողմից զենքերու պահանջ, բանտին մէջ անլուր տանջանքներու կենթարկելին բանտարկեալները զինական պահեստներու խոստովանութեան համար, միւս կողմէն ամբողջ շրջանի ժողովուրդը կը բռնադատուէր զենքեր յանձնելու կառավարութեան, այդ գործին համար հարկաւոր էր միջնորդ, և ով աւելի յարմար միջնորդ կարող էր լինել կառավարութեան և ժողովուրդին միջև, քան զերմանացի պարոն Էյմանը, որ լիովին ժողովուրդին վստահութիւնը կը վայելէր: Այդպէս ալ եղաւ, պարոն Էյման հիւր առնելով տեղւոյն առաջնորդ Պսակ վարդապետը և ուրիշներ, ամէն ճիգ թափեց՝ համոզելու հայ ժողովուրդը, շրջանի բոլոր վայրերը կայցելէր, ժողովուրդի ժողովի կը հրաւիրէր և ամէն տեսակ երաշխաւորութեան խոստումով կը համոզէր, որ զենքերնին յանձնին կառավարութեան:

Այս գործին մէջ՝ մեզի այնպէս կը թուի, թէ պարոն Էյման չէր գիտէր թուրքերու մտադրութիւնը կոտորածի և տեղահանութեան վերաբերմամբ, իսկ եթէ գիտէր, այն ատեն Խարբերդի բոլոր ոճիրներու հեղինակներուն ամենագլխաւոր պատասխանատուն պէտք նկատել պարոն Էյման:

3. Տեղահանութիւնները սկսեցին, երբ արդէն բանտարկեալները զիջերները մաս առ մաս, երկար թոկերով իրարու կապուած, մեզի անյայտ ուղղութեամբ քշուած էին և շշուկները հասան մեզ, թէ ամբողջապէս կոտորուած են: Վերջին խումբն էլ բանտից դուրս չէր ուզած ելլել և սենեակը կրակի տալով, իրենք ալ մէջը վառած էին: Գերմանական միսիօնի մտտիկ անձնատրութիւններ կուգային այնտեղ ապաստան խնդրելու. դուռը անոնց երեսին փակել կուտար պարոն Էյման և կը վռնդէր: Իմ և պատուելի Եղոյեանի պնդում[ը] առհասարակ դիմողներու ապաստան տալու և կառավարութեան մոտ միջամտելու՝ «Չեն կարող» պատասխանը միայն կստանայինք: Քանի-քանի անգամ դիմեցինք իրեն՝ խնդրելով, որ հեռագրի Պօլիս դեսպանին, քանի որ ինք երաշխաւորած է ժողովրդի ապահովութեան համար, ստացած ենք բացասական պատասխան,

ԻԿ(Ը) տարի, թիվ 1(29), Խունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական հանդես

7 Մեզրե, Մեզիրե՝ քաղաք Խարբերդի նահանգում, Խարբերդ քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք: 1914թ. ուներ 14 հազար բնակիչ, որի կեսը՝ հայեր: Այստեղ է ծնվել Վահան Թորոպենցը:

միշտ «Չեմ կարող»-ին կառչելով:

4. Շատեր գերմանական հաստատութեան ներս ապաստանած էին գաղտագողի մտնելով, ասոնց տղամարդիկ չ'կային, կիներ և երեխաներ էին, երբ պարոն Էյման գիտցած է նրանց գոյութիւնը, բռնի դուրս թափած է, գիտնալով որ դուրսը կը կոտորուին:

5. Ամենավերջին պահուն սեմինարիի վերջին կարգի աշակերտները՝ թով 15 հոգի, զինուորական տարիք ունենալին պատրուակելով, դուրս հանեց հաստատութիւնից, որոնց թոյն իմ որդիս՝ որոնցմէ այսօր զանազան ձևով ազատուածներ կան միայն 3 անձնատրութիւններ:

6. Չնական հրաման մը եկաւ, թէ ներում եկած է բողոքական հայերուն, և յայտարարուեցաւ, որ բոլոր թագնաւածները հրապարակ ելլեն և արձանագրուին: Արդէն տղամարդիկ չ'կային, կանայք և երեխաներ էին, որոնց ամենքն էլ հրապարակ եկան և իւրաքանչիւր անձի 20-ական դուրուշ վճարով՝ արձանագրեցին: Ըստ երևոյթին թագնաւածները հրապարակ հանելու մի նոր հնար էր: Արձանագրութիւնները վերջանալէն յետոյ, կրկին սկսեցին հաւաքել երրորդ և վերջին տեղահանութեան համար: Սեպտեմբեր ամսուն վերջերն էր, 1915 թին, որ մնացորդ խլեակները հաւաքուած ճամբայ պիտի հանէին: Այդ նոյն օրերը, Պուկարիոյ պատերազմին միջամտութեամբ, ջարդուած էր Սերպիան և միացած Պերլին Պօլիս երկաթուղին,⁸ որուն տօնը կատարուէր Խարբերդի մէջ, նոյն օրը, որ վերջին մնացորդները կը տեղահանուէին, պարոն Էյման փոխանակ այդ բեկորներուն համար միջամտելու, որ ծակերից դուրս բերուած էին, իրենց՝ բողոքականներու անունով, զացած էր թիւրքերու կատարած օրայ հանդէսին և այնտեղ բանախօսութեան ատեն յայտարարեց Գերմանիան 300 միլիօն մահմեդականութեան պաշտպան:

7. Ամերիկեան քօնսիլ ազգով հրէայ, անունով Lacelie Davis, ցոյց տուած է նոյնպէս բացասական վերաբերում, առաջին անգամ իրեն դիմող քաղաքացիներուն, պատասխանած է, թէ ինք միայն կը պաշտպանէ ծնունդով ամերիկացի քաղաքացիներուն, և այնքան քաղաքացիներուն դիմումները մնաց անհետևանք, և ամերիկեան քաղաքացիները մեծ չափով քօնսիլի անփութութիւնից կոտորուեցան: Պարոն Սիմոն Սարկաւագեան, տասնեակ տարիներով Ամերիկա ապրած և երկար տարիներ քաղաքացի դառած, երբ կարաւանին հետ կը քշուէր, ամերիկեան քօնսիլի դռնէն անցնելու պահուն, երբ տեսաւ քօնսիլը, վազելով նրան ներկայացուց քաղաքացիական թուղթը և խնդրեց պաշտպանութիւն, սակայն նա արհամարհանքով ետ հրեց թուղթը և մերժեց պաշտպանել: Պարոն Սարկաւագեան թուղթը առաւ պատռեց և նետեց իր երեսին⁹:

8. Խարբերդի ժողովուրդը մեծ բանակութեամբ փող տուած են Ամերիկեան քօնսիլին, Ամերիկեան միսիօնի նախագահ պարոն Սիքսին և Գերման

8 1915թ. սեպտեմբերին Բուլղարիան միացավ Քառայակ դաշինքին: Հոկտեմբերի 7-ին գերմանական, ավստրո-հունգարական ու բուլղարական զորքերը սկսեցին ընդհանուր հարձակում Սերբիայի դեմ և հոկտեմբերի 9-ին գրավեցին Բելգրադը: Իսկ 1915թ. նոյեմբերի 10-ին գրավելով Նիշը, ավստրական զորքերը միացան բուլղարական զորքերի հետ, դրանով բացելով տխրահռչակ Բեռլին-Բաղդադ գիծը:

9 Ուրիշներ կը վկային, թէ պարոն Սարկաւագեան տեսնելով քօնսիլը, դէպի նրան առաջացաւ և սահուն անզերեմով ըսաւ. «Ես ամերիկեան քաղաքացի եմ երկար տարիներ, պաշտպանէ գիս»: Նա պատասխանեց, որ իրաւունք չունի պաշտպանելու, այն ատեն պարոն Սարկաւագեան պատռեց թուղթը, նետեց երեսին և պօռաց. «Առ և ք... մէջը քանի որ այդ թուղթը քեզ համար անարժէք է, աւելի լաւ է մեռնել քան քեզ մնան սրիկայի մը դիմել»:

միսիօնի նախագահ պարոն Էյմանին, այժմ մնացորդներից անոնք, որ կերթան ստանալու իրենց տուած փողը, կը տրուի օսմ[անյան] պանքնօթ ոսկի դրամի փոխարէն, որ միայն մէկ երրորդ արժէքը ունի:

Պատ[վելի] Պետրոս Հակոբեան
Խարբերդ, Փերջինճ¹⁰ գիւղացի
ՀԱԱ, ֆ.227, ց.1, գ.489, քթ.6-11, բնագիր, ձեռագիր:

ՅԱՎԵՐԸԱԳՐՈՒՄ

N 3

**ԽԱՐԲԵՐԳԻ ՆԱՀԱՆԳԻ ԽՈՒՅԼՈՒ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԳՐԻԳՈՐ
ԵՂՈՅԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

20 Մայիսի 1916 թ.
Գրիգոր Ա. Եղոյեան

Խարբերդի Խույլու¹¹ գյուղէն
Ազատուած Խարբերդի 15-ի ջարդերէն

1913 դեկտեմբերի 25-ին Ամերիկայէն դարձայ: Այժմ 39 տարեկան կը գտնուիմ Էրզրում, իմ ընտանիքս, կինս, 2 տղա, 2 աղջիկ, քոյրս, եղբայրս՝ իր 8 զաւակներով դեռ կը մնան Խարբերդի Մէզրէն:

Ես իմ զաւակներովս կը մնայի գիւղը, արհեստով նաճար¹² ու ես ունեի իմ անձնական արտերս ու այգիներս: Որեւէ ապրուստի նեղութիւն չունենալէ զատ շատերու ալ օգտակար կարող էի լինել:

Խույլու գիւղը կը բաղկանար 300 տունէ՝ որուն 10 թուրք, մնացածը՝ հայ ընտանիքներ, որոնց թիւը կը հասնէր 2000-էն աւելի: Այս գիւղէն կայ 90 տուն Ամերիկայ, որ գաղթած են ժամանակի ընթացքին, և այժմ կը գտնուի 1015 մարդ ընտանիք թէ երիտասարդութիւն:

Գիւղս հարուստ գիւղերէն մէկն էր Խարբերդի գիւղերէն, Մէզրէն 2 ժամ հեռու, մեծ դաշտին մէջ, դեպի հարավ: Հողին 95 տոկոսը կը պատկանէր հայերու, գիւղը շրջապատուած է պարտէզներով: Ժողովուրդին կէսէն աւելին երկրագործ էին, 1/4 -ը կաշէգործութիւնով կ'ըբաղէր և մնացածը այլ և այլ արհեստով: Գիւղին մէջ կար 3 եկեղեցի, բնակչաց 160 տուն լուս[աւորչական], 110 բող[ոքական] և մնացած 20 կաթոլիկ: Լուսաւորչականք և բողոքականք ունէին իրենց երկսեռ դպրոցները, լուս[աւորչականք]՝ 3 և բողոք[ականք]՝ 2-ական վարժապետ և վարժուիիներով, իսկ կաթոլիկ՝ մէկ դպրոց 1 վարժապետով:

Վերջին տարիներս դպրոցներու ծախքին մեծ մասը կը հոգացուէր Ամերիկայի մէջ հաստատուած մեր երիտասարդներու կրթասիրացի դրամագլուխի եկամուտներէն:

1914-ի երկրաքանդ պատերազմները սկսելէն յետոյ գիւղս ալ իր նեղութեան և չարչարանքի օրերը սկսեց ունենալ: Ընդհանուր պատերազմը յայտարարած

10 Փերջենճ, Փերջենջ, Բարջանճ՝ գյուղ Խարբերդի նահանգի, Խարբերդ գավառում: 1915-ին ուներ 3500 բնակիչ, որից 2000-ը հայ, մնացածը՝ թուրք: 1896 և 1915 թվականներին գյուղը ենթարկվել է ջարդերի ու ավերման:

11 Խույլու՝ գյուղ, գյուղաքաղաք, ավան Խարբերդի նահանգի Խարբերդ գավառում: Հնուն՝ Թլկատին, Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհի Անձիտ գավառում:

12 Նաճար՝ ատաղձագործ, հյուսն:

ԽՈՒՅԼՈՒ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԳՐԻԳՈՐ 2010
Բ(Ը) փարթ, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական համոզան

օրէն գորահանութիւն սկսեց և անմիջապէս 18-45 զէնքի կոչուեցան: Գիւղիս կարող անձինք անմիջապէս իրենց պէտէլները¹³ տրուին, քանի որ կառավարութիւնը կընդունէր 35-45 եղողներուն ու այսպէս շատեր ազատ մնացին զինուորական ծառայութիւնէն, իսկ մնացած 35-էն վար եղողներ դրկուեցան պատերազմի դաշտ:

Այս օրերէն յետոյ կառավարութիւն սկսեց հաշտ աչքով չի նայել հայ ժողովուրդին և մասնաւոր հալածանքներ ծայր տալ սկսեց: Փախստական զինուորներ փնտռելու պատրուակին տակ ժանդարմներ կը դրկուէին մասնաւորապէս հայ բնակչութիւններ ու մեզի չի տեսնողուած չարչարանքներ կուտային, կարծես մասնաւոր նպատակով, չի նայելով, որ թուրք փախստականներ լեցուն էին և ոչ մէկ խօսք անոնց համար: Մէկ օր մը Վարդոյ Փափագեանը, 60 տարեկան կին մը, որ իր տղան զինուոր տարուելուն մենակ լուր ուներ՝ որպէս թէ փախած է, ժանդարմներ մտան տունը, անասուններ քաշեցին և ոմանք մորթեցին, ու ատով ալ չի գոհացան, խեղճ կինը տարին իրենց մօտ ու ոտքերը փախախախի¹⁴ մէջ անցուցած կը զարնէին որպէսզի իր տղուն տեղը ըսէ. մինչդեռ ամիս մը չանցած իր տղան Կարինէն ետ եկաւ իր պէտէլը վճարած:

Ժանդարմներ գիւղին մէջ կը պտտէին, դէմէրնին անցած մարդը պարապ տեղ կը ծեծէին: Օր մը, երբ գունկուպտաղցի Հայտար ժանդարման զիւղին մէջ կը պտտէր, եէնիճէցի¹⁵ Գրիգորին հանդիպեցաւ ու առանց խօսք մը խօսելու սկսավ զարնել, խեղճ մարդը երբ փայտը բռնել ուզեց, որ իրեն չի զարնէ, սա վայրենի գազանը պատճառ ըրաւ, թէ դուն հայ մը ըլլաս և իմ փայտս բռնես զարնելու ատենս, ու իր ընկերներուն կանչելով՝ մարդը գետին զարկին և կիսամեռ ձգեցին, որը 25 օր հետոյ մեռաւ և մենք կառավարութիւն կը դիմենք և «Իճնապնայ պախարըզ»¹⁶ ըսելէն զատ ուրիշ բան չիկայ: Եւ այսպէս, ետեւէ ետեւ, անպատմելի դեպքեր տեղի կունենային: Մի օր, երբ ես քանի մը ընկերներով կայնած էի տեղ մը, այս գազանը եկաւ ու իմ ընկերներս իրենց երեսները պայեցին: Այս մարդը ինձի կը հարցնէ. «Դու ինչու՞ չի փախար, չե՞ս վախնար ինձմէ»: Ես ըսի. «Յանցանք մը չունեն, որ քեզմէ վախնամ»: «Բայց անոնք ինչու կը փախին», ըսի՝ որովհետեւ պարապ տեղը կը զարնիս, «Վայ, ես պարապ տեղ կը զարնիմ» ըսելով՝ սկսաւ ինձի զարնել և ամբողջ օր մը բանտարկել ...

Այս օրերէն հետոյ 1915 մայիսի սկզբներուն եկան գիւղը պաշարեցին 85 զինուոր և 12 ոստիկան ու առանց լուր տալու, սկսան տուներ խուզարկել զէնքի համար (չմօռնանք ըսելու, որ 8 օր առաջ քաղաքի և գիւղերու մէջ մունետիկ կանչել տրուավ - որ հայ և թուրք ամէնը ալ իրենց տուներու մէջ գտնուած արգելեալ զէնքեր պէտք է կառավարութեան հանձնին 8 օրան մէջ, եթէ ոչ՝ վերջէն որու քով որ գտնուի՝ հրացանի [տեր] պիտ բռնուի, ու այսպէս ալ քանի մը թուրքեր օրինակ ըլլալու համար մէյնէկ հատ մարտինի¹⁷ զէնք տարին

13 Բեղել՝ հատուկ հարկ Թուրքիայում քրիստոնյաների համար բանակից ազատվելու դիմաց:

14 Ֆախախկա՝ երկու ծայրերը մի ծողի ամրացված թուկ, որի մեջ կապելով պատժվողի ոտքերը, պատժուն էին գանակոծութեամբ:

15 Ենիջե, Ենիճե, Ենիջա - այս անվանումով երկու գյուղեր են եղել Խարբերդի նահանգի Խարբերդ գավառում: Գյուղերից մեկը գտնվել է Խարբերդ քաղաքից մոտ 14 կմ հարավ: Այս գյուղը 20-րդ դարի սկզբներին ունեցել է 80 տուն հայ բնակիչ: Մյուսը՝ Խարբերդ քաղաքից 28-29 կմ հարավ և ուներ 16 տուն հայ բնակիչ:

16 «Պատասխանը կնայենք»:

17 Խոսքը ամերիկյան միալիցք Պիբոդի Մարտինի Գնուչի հրացանի մասին է :

տրուին): Մենք այս ժամանակի միջոցին կտոր մը¹⁸ զենք յանձնեցինք մեր առաջնորդի և մեծերու, ի մասնաւորի Գերման միսիօնար մսթր Էյմանի տրուած թելադրանքների համար: Բայց կառավարութիւնը ասկէջ գոհ չի մնալով, սկսեց բռնի կերպով պահանջել ու փնտռել: Եվ այս խուզարկութեան ժամանակ բաւական զենքեր հանեցին, թէպէտ ոչ արգելեալ, ու այս օրեր տեղիս թուրքերու մատնութեամբ՝ թէ այս ինչ այն ինչ անձինքը տասն հարուած[անի]ներ¹⁹ ունին կամ մաւզեր,²⁰ մարտին [հրացաններ] ունին, ըսին, և այս պէս սկսան գիւղիս աչքառու մարդիկ չարաչար ծեծել: Նաև այս պատրուակով հաւաքեցին գիւղիս կուսակցական 16 անձինք ու տարին բանտ, ինչ որ արդէն քաղաքէն ու գիւղերէն լիք էին:

Այս ատեններ օրէօր աւելի կը շատնար հալածանքը: Բանտին մէջ ամէն օր չարաչար կը ծեծէին փալախչաներու²¹ մէջ կապած, ինչպէս նաև գիւղերու մէջ: Գեղվանգի²² մէջ նստող միտուրը²³ Պօլիսէն եկած սրիկայ թուրք մը, ձեռք առած էր իր ձեռքի տակ եղած գիւղերը նեղել, չարչարել: Թէպէտ մեր գիւղը իր ձեռքին տակ չէր գտնվում, բայց որովհետև մեծ հայաբնակ գիւղ մնէր, արձակ համարձակ կուգար, կը նեղեր: Մենք կը բողոքէինք կառավարութեան այս մարդուն համար, բայց կառավարութիւնը չէր լսեր այլևս մեր ձայնը:

Մէկ օր մը, երբ Կարմիր²⁴ գիւղի մէջ իր խժողովները ի գործ կը դնէր, շատերու ոտին տակ նալեր գամելով կամ փայտի հարվածներու տակ կիսամեռ ընելով, ինչպէս Թարխանեան Չաքարը, որ կիսամեռ ինկած էր մարթին [հրացան] մը ուզելու պատրվակով, իր դրացի թուրքերը կը մեղքանան ասոր և կուզեն ազատել: Վերջապէս միջոց մը կը խորհին և կուզեն մարդուն ըսել տալ, թէ ըսէ, որ Խուլյուն մէկուն ծախած էմ, որպէսզի զինք թողուն և այն մարդէն պահանջեն: Մարդը կսէ, որ ես չեմ կրնար այդ վատութիւնը ընել, քանի որ այդ պէս բան եղած չէ: Վերջապէս զինքը կը հանեն գիւղէն դուրս, որ սպաննեն: Հոն տեղ իր դրացի թուրքեր կաղաչեն, որ գոնէ այդ վայրկեանը իր վրայէն անցնելու համար ըսէ, որ խուլյացի Օվիկեան Գրիգորի ծախած էմ, և ահա փափագին հասած էր այդ գիւղի թասիլտար²⁵ Օսման աղան, որ մասնաւոր հակառակութիւն ունէր Գրիգորի հետ: Մարդը երկու հատ ժանդարմով եկան տարին Կարմիր և իրմէ ուզեցին այն զենքը, որ որպէս թէ գնած էր Չաքարէն: Անշուշտ չկար, սկսան ծեծել, գիւղին մէջ կախաղան շինեց այս անօրէն մուդուրը²⁶ և հանեց, որ կախէ, նաև պահանջելով անկէ, որ ուրիշներու համար մատնութիւն ընէ: Վերջապէս մարդը քաջաբար և հանդուգն կերպով դիմադրեց անօրէնին ու որևէ մարդ բերան չի տրուաւ: Յետոյ այս զայրացած զազանը ժողվեց Կարմիրի գլխատր մարդիկը 7 հատ, տեղին քահանան ու մեր Գրիգորը տարաւ Գեղվանք՝ իր կեղորունը: Հոն տեղ երկու օր նորէն անտանելի չարչարանքներ տալէն վերջ, կը պահանջէ քահանայէն, որ Խուլյուի եկեղեցիին մէջ պահուած ռումբեր կան

18 Նկատի ունի քիչ՝ մի քանի հատ:
 19 Նկատի ունի Մաուզեր մակնիշի ատրճանակը:
 20 Խոսքը Մաուզեր մակնիշի հրացանի մասին է:
 21 Տե՛ս ծանոթագրութիւն 14:
 22 Գեղվանք՝ գյուղ Խարբերդի նահանգում: 20-րդ դարի սկզբներին ունէր 58 տուն հայ բնակիչ:
 23 Պետք է լինի մյուղիլը՝ գավառակապետ:
 24 Կարմիր, Կարմիմ, Կարմին՝ գյուղ Խարբերդի նահանգում, Խարբերդ քաղաքից 17-18 կմ հարավ-արևելք: 20-րդ դարի սկզբներին ունէր 20 տուն բնակիչ:
 25 Հարկահավաք:
 26 Տե՛ս ծանոթագրութիւն 23:

և դուն տեղը գիտես, քանի որ հոն կը պաշտօնավարես շատ օրեր... Վերջապես, խեղճ քահանան, ալ չի դիմանալով այդ չարչարանքներուն, մի քան կը խորհի ազատելու համար: Կը խորհի, որ գիւղի եկեղեցիին դռան առջևը ջուրի հոր մը կայ, երթայ և հոն իյնայ ու վերջ տայ իր կեանքին: Եւ այսպէս ալ կ'են, միւթարիւն կսէ, որ շատ լաւ, զիս տարէք հոն, որ տեղը ցուցանեն: Եւ բերին մեր գիւղ՝ էշի մը վրայ նստեցուցած, ութը ժանդարմայ մուտորը միատեղ: Երբ եկեղեցիին դուռը հասան, որ ատեն անոնք ձիերէն վար կ'իջնէին, քահանան ինքզինքը արդէն հորը ձգած էր: Ուստի այս գազանը տեսնելով, որ ինքը խաբուած է, անմիջապէս հող տեղ եղող կոշկակար Նորսիկեան Յովհաննէսը ծեծելով՝ հորը իջեցուց, որ վեր հանէ, պայմանով, որ շուտով իջնէ և ողջ հանէ, թէ ոչ՝ ինք ալ պիտի մեռցըլի: Այսպէս մարդը կ'իջնէ մինչև ջուրին երեսը, բայց մարդը տակը իջած չկայ, վերջապէս քիչ հետոյ ջուրը վեր կը նետէ քահանան ու Յովհաննէսը անոր գլուխէն կը բռնէ և չափանով վեր կը հանէ կիսախեղդ: Պահ մը սպասելէն յետոյ, երբ տեսան թէ ողջ է, անոր ոտքերէն քաշելով տարին եկեղեցիին մէջ ու նորէն կը պահանջէին, որ ռուսներուն տեղը ըսէ: Քահանան ըսաւ, որ ես իջայ, որ ռուսները վեր հանեն, ինչ^օու չի թողուցիք: Վերջապէս այս անօրէնը հաստատ գիտնալով, որ խաբուած է, տեղիս ատաղձագործ վարպետներէն քէրէլթի²⁷ մը բերել տուաւ ու ասոր միսերը կը դառցունէր և մօրուքը կը քաղէր: Այս վիճակին մէջ, նորէն էշուն վրայ դրած գիւղիս յայտնի մարդերէն 8 հոգի, որպէս թէ այս կիսամեռին հոգ տանողներ ճամբուն մէջ, տարաւ իր հետ և անմիջապէս բանտարկեց ասոնք ալ, և այս թշուառները, 7 օր անտանելի խժոժութիւններու տակ, գիւղէն դուրս ձորին մէջ մորթուեցան 100-աւորներու հետ, որ արդէն քաղաքիս սպաննութեան օրերը սկսած էր:

Նոյն օրը եկած էր մեր գիւղ նոյն անպիտան մարդը և [ասաց, որ] գիւղին մէջ թող հաւարտիւն եկեղեցու բակը 15 տարեկանէն վեր ամէն մարդ, կայսրէն հրովարտակ մը եկած էր, պիտի կարդացուի: Այս կերպով և բռնի ալ հաւաքեցին ամէնը ու բռնութեամբ տարին Գեղվանք գիւղը, և միւս օր գիշերով մաս առ մաս կը տանէին կրսպանէին: Ես ինքս, որ ազատեցայ քահանայի հորը իջնալէն վերջ, ես գացի քաղաքը և ալ գիւղը չեկայ, քանի որ եղբորս տունը քաղաքն էր ու հոն ապաստանեցայ, և երբ գիւղի և քաղաքի մէջ էրիկ մարդիք տարած էին, ալ ինծի ուրիշ ճար չէր մնար, խորհեցայ Գերման շէնքերուն մէկուն մէջ, եթէ կարելի է, ինծի ապաստան մը գտնիմ և հաջողեցայ ալ: Գնացի մէկ շէնքի մը մէջ մտայ, որուն հսկիչը աղջիկ մներ (Թանթի Կատարիինէ), այս ատեն ասիկայ իր շէնքին մէջ ուներ 150-170 չափ որբ աղջիկներ ու դուրսէն ալ եկած էին փախստական կիներ և աղջիկներ՝ 100-ի չափ, այն պէս, որ շէնքին մէջ 260է աւելի անձինք կային և պահուիլ ալ անկարելի էր: Երբ ես այդ տեղ յուսահատած՝ կը խորհէի ինչ ընելիքիս վրայ, Թանթի Կատարիինէն լսեց իմ շէնքին մէջ ըլլալս ու կանչեց իր մօտ: Տեսաւ իմ յուսահատ վիճակս, և ըսաւ, որ ձեռքիս եկածը պիտի ընեն, և զիս իր սենեակներէն մէկուն մէջ պահեց, որպէսզի շէնքի մէջ որբէ մէկը չիգիտնայ իմ հոտ ըլլալս: Ութը օր այսպէս պահելէն վերջ, եղբայրս, որ Գերման շրջանակի մէջ պաշտօնեայ էր, ինքը իր տունով փախաւ եկաւ այս շէնքին մէջ ու հոս ապաստանեցաւ, և ես այս պարագային միջոցը գտայ ու գետիկը փորեցի և հոն պահուեցայ: Այս պէս հալածանքը ընդհանուր էր, էրիկ մարդ չկար արդէն ոչ քաղաքը և ոչ գիւղեր ու կիւն գաւակներով օրէօր

27 Արցան:

կը քշուէին դեպի սպանդանոց:

Այս պարագաներով, երբ մի ամիս անցած էր, Գերման որբանոցի տնօրէն միսթր Էյման լսէր էր, որ ես հոտ պահուած եմ, մի քանի անգամ նամակ գրեց Թանթի Կատարինէի, որ զիս դուրս հանի՝ ըսելով, որ կառավարութիւնը պիտի գայ և շէնքերը պիտ խուզարկէ ու եթէ մէկ տղայ մարդ գտնէ, անշուշտ ամբողջ շէնքերը ու որբերը վտանգի պիտի երթան: Բայց այս քաջարի տղջիկը, որ 17 տարիէ ի վեր հայ որբերու հետ ապրէր ու անոնց ցաւերովը ինքը ամէն օր վշտացած էր, ամէն օր կերպով մը կը պատասխանէր Էյմանի ու զիս չէր թողոր: Վերջապէս օր մը մսթր Էյման անձամբ եկաւ ու եղբորս ըսաւ (ճիշտ այն ատեն, որ եղբայրս անտանելի ցաւերու տակ հիւանդ պառկած էր). «Եղոյեան, ստոյգ է, որ եղբայրդ հոս կը պահուի, պէտք է այս երեկոյ դուրս ելլէ, եթէ ոչ՝ ձեր ընտանիքի կեանքն ալ վտանգի տակ է»: Եղբայրս արդէն ինքզինքը կորուսած էր այդ խօսքին վրայ, և ահայ Էյմանը անպատասխանի դուրս ելած էր և նոյն կերպով խօսած էր Թանթի Կատարինէի, ու ինձի լուր տրուին, որ պէտք է ելլեմ այս երեկոյ դուրս ու անշուշտ մահը դիմատրելու: Վերջապէս ես, որ երեկոյին կը պատրաստուէի դուրս ելլելու, անմիջապէս այս աղջիկ ինձի լուր դրկած էր, որ թող այս գիշեր ալ սպասէ՝ տեսնենք: Եւ այսպէս օր մը ևս մնացի ու միւս օրը կաթոլիկներու ներում եկաւ և առիթէն օգտորուելով, երկու օր յետոյ, բողոքականաց ալ եկաւ ու ես շէնքին մէջ ելլել, պտտելու ազատ էի, մինչև այն օրը, որ միջոց մը գտայ ու Տէրսիմ փախայ:

Գառնալով գիւղիս պարագաներուն. այն օրին, երբ տղայ մարդիկ տարած էին, դրացի թուրքեր կը լեցուին գիւղը և, հին օրերու ծանօթներ ըլլալով, կը համոզեն կիներ և աղջիկներ, որ իրենց, ստացուածքով մէկտեղ իրենց գիւղերը երթան ու իրենք պիտի պահեն զանոնք: Այսպէս շատեր զացին իրենց ստացուածքով մէկտեղ և այնտեղ ալ սպաննուեցան: Եւ գիւղիս մեծ մազան²⁸ Հաճի Մուսթաֆան, բոլորին կը կանչէր իրենց ունեցածները բերին իր տրամադրութեան տակ, որպէս զի Ուրֆայէն դարձին իրենց դառցանէ ... : Վերջապէս երեք շաբաթներ այս անտանելի օրերուն մէջ կառավարութիւնը իր մասնաւոր մամիւրէնը²⁹ կը դրկէ և գիւղի ամբողջութիւնը կը հանէ, որպէս թէ Ուրֆայ պիտի դրկէ ու կտանի գիւղէն մէկ ու կէս ժամ հեռուն՝ Քիրդէմիլի³⁰ կոչուած գիւղի մօտ, ձորի մը մէջ, ամէնը կացիններով և սուրերով կը մեռցունեն: Եւ այս մեռեալներուն մէջէն քանի մը վիրաւոր կիներ և աղջիկներ գիշերին կարթնանա, կուզան նորէն գիւղը, որոնց մէկ քանին գիւղիս թուրքերը կսպաննեն ու միւսները՝ 7 հոգի, կուզան Մեզրէն և մինչև հիմայ դեռ ողջ են:

Այս վիրաւորներէն կին մը՝ Եւայ Փօշտոյեան, որ եկած և օտար գիւղի իրենց ծանօթ մէկ թուրքին տանը կը մնայ, մեր գիւղացի Արիֆ չավուշ ըսած արիւնարբուն, որ դեռ չէ կշտացած այնչափ արիւն խմելէն, կերթայ այդ թշուառ կնոջ կրսէ որ. «Ինչու հոս կը մնաս, եկուր մեր տունը երթանք և ես քեզ պիտի հոգամ» և կը բերէ ու կսպանէ: Ապտուլլայի տղան՝ Մուսթաֆան խարբերոցիներուն անչափ արիւնը թափելէն դեռ չէ գոհացած՝ այն օր երբ Էրզնկէայի ու Տրապիզոնի մնացորդ աքսորականները Խարբերոց հասնելէն վերջ կը դրկուեն Կէօլճիկի մօտերը մեռցնելու, այդ օրը կաէ՝ 75 մարդ մեռցուցի:

28 Կրոնական առաջնորդ:

29 Կառավարիչ:

30 Քյուրդէնլուկ՝ գյուղ Խարբերոցի նահանգում, Խարբերոց քաղաքից 24-25 կմ հարավ-արևելք:

Նոյն մարդիկ, որ իրենց սուրը սրած են արդեն, չեն ուզեր պարապ մնալ և մարդ կը փնտռեն, որ ուրախութիւն ընեն անոր շարչարանք տալով. այս ատեն կը գտնին սաբրիչ Մանուկ Տէրոյեանը, որ մինչև այդ ատեն կը պահուի եղեր Հաճի աղայի պաշտպանութեան տակ, այս Արիֆ չաուշը, չօպան Մամոն կերթան, կհանին այս մարդը և հարիւրաւոր անձինքներու առջև, որոնք եկած էին մօտակայ գիւղերէն, կը շարչարեն, կը ծեծին, լեզուն կը կըտրին՝ ըսելով թէ այս լեզուդ էր թերթ կը կարդար, և այս պէս կը մեռցունին:

Այս օրէ 15 օր վերջ, որ գիւղին մէջ թուրքերուն մօտ քանի մը հատ 10-15 տարեկան տղայ մնացած է իրենց ծառայելու համար, Հաճի աղային թէյիպը,³¹ Ֆազլի Մամոյի տղան, Ապտուլլայի տղան՝ Մուսթաֆան, քիւրտ Մամոյի տղան՝ Մէսօն, որպէս թէ գիւղէն դուրս գործի կերթան, հետերնին կը տանին Յովհաննէս Թաթերոսեանը 14 տարեկան և Ասատուր Անանեանը 15 տարեկան: Եւ ասոնք լոկ ուրախութիւն մը անելու համար, խեղճ Յովհաննէսը շարաչար կ'իյնայ իրենց խէնջերներու³² տակ ... Եւ այս պէս ետևէ ետև դէպքեր կ'լլային, որ ըսել կամ թըուել անկարելի է:

Թէ ինչպէս գիւղիս տղամարդիկ հեռացան գիւղէն պատերազմ հրապարակուելէն յետոյ:

Պատերազմը հրապարակուելուն պէս, զինուորացուներուն՝ 23 մարդ, իրենց պէտէլը դրամ վճարեցին, նաև 36 մարդ ալ զինուոր գնացին՝ ոմանք պատերազմի դաշտ և ոմանք ալ քաղաքիս մէջ մասնաւոր ծառայութիւններու: Ասոնցմէ վերջ, կասկածներու պատրուակով 17 մարդ ալ բռնած բանտարկած էին և ասոնցմէ մէկ ու կէս ամիս վերջ գիւղիս գլխաւորներէն 13 մարդ ուրիշ պատրուակով տարին բանդարկեցին և մի շաբաթ հետոյ 34 մարդ ալ կառքերու հետ միասին Մուշի ճակատը դրկեցին՝ ռազմամթերք տանելու, ու այսպէս մնացածը մի շաբաթ յետոյ ամբողջ գիւղի տղամարդիք քշեցին:

Այս 34 մարդիքը, որ եզան կառքերով Մուշ դրկուեցան, իրենց հետ կային Խարբերդի գիւղերէն 260 կառքեր, բայց ոչ մէկ թուրքի կառք, հակառակ, որ այնչափ շատ կային: Մինչև Մուշ կերթան, բեռները կը փլցունին և անկեց կառքերու կը նստեցունեն Մուշի հայ ժողովուրդէն կիներ և զաւակներ ու կը հանեն քաղաքէն դուրս՝ քանի մը ժամ հեռու գիւղի մը մէջ կը լեցունեն և կայրին: Եւ ասկէց սկսելով կառապանները օրական քանի հարիւր կսպաննին ժանդարմներու կիրքին համեմատ: Մեր գիւղի Կարկարեան Պողոսը, որ միաձեռք, պակասաւոր մէկ մներ, երբ ժանդարմային կըսէ, որ այս ինչ գործը չեմ կրնար ընել, անմիջապէս հրացանի կը բռնէ մարմինը, ըսելով որ «Դուն, ուրեմն, աւելորդ մարդ էս, ապրելու իրաւունք չունիս»: Եւ այսպէս ետևէ ետև կ'լլան, մինչև կուգան Պիթլիս, Տիարալէքի, Արդանա-Մատին, ուր հազիւ 65 կառք մնացած է արդէն: Մեր գիւղի ծերունի Հաճի Մակարը, որ լաւ թուրքերէն գրել-կարդալ գիտէր արդէն, այս մարդ իրենց պէտքին համար կը պահեն որպէս հաշիւներու պահող: Ինքը կսէ. «Ալ հերիք է, որ ապրեմ, չեմ կրնար դիմանալ այս բաներուն, զիս ալ ըսպաննէցէք»: Մամիւրէնը³³ կը պատասխանէ. «Մենք գիտենք քեզ երբ պիտի ըսպաննենք»: Մատինէն Խարբերդ գալու ճամբուն վրայ մի կառքի եզները չեն կրնար կառքը քաշել, ժանդարման քանի հայերու

31 Այստեղ օգտագործվում է փոքր ծառա՝ սպասյակ իմաստով:

32 Դաշույններու:

33 Կառավարիչ:

կսէ, որ գացէք այն կառքը դուք քաշէցէք, այս պարագայով Ղազար Աղբատեան 75 տարեկան ծերունին, որ երկուք ու կէս ամսրուան տաժանելի ճամբորդութեան մէջ ինք զինքը հազիւ կը տանի. «Կըսէ, թէ չեմ կրնար քաշել այդ կառքը»: Խօսքը բերնէն ելածին պէս գլուխին մէկ հարվածով գետինը կիյնայ, բայց անօրէնը դեռ պակասը լրացունելու համար կը քշէ իր ձին վրան ու դառցունէ, կը դառցունէ վրան, մինչև որ մարմինը բոլորովին կանշնչանայ: Եւ այս պէս կուգան մինչև Տէվէպոյնի³⁴ ըսուած տեղը, ուրկէ Խարբերողը կերևնայ, հոտ տեղ կը բռնին Մակար վարժապետը և կսին. «Ալ ժամանակն է, որ քեզ ըսպանինք» ու կսպանին:

Եւ այսպէս քաղաքը հասան մերիններէն 6 մարդ - երկու 15 տարեկան տղայ, և չորս տարեց մարդիք, որոնք կարծես լոկ պատմութիւնը ընելու համար եկած էին մէզի, և անկէց յետոյ անոնք ալ Խարբերողի ընդհանուր աքտրանքներէն 3 ամիս վերջ եղած աքտրանքին հետ գնացին աքտր ...

ՀԱԱ, ֆ.227, ց.1, գ.489, թթ.13-24, բնագիր, ձեռագիր:

N 4

ԱՎԱՆԱՏԵՄ ՀՈՎՀԱՆՆԵՄ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌՆԻՍՏ ԳԻՒՂԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

17 օգոստոսի 1916 թ.
Աշտարակ

Մշոյ Առնիստ³⁵ գիւղացի Յովհաննէս Պետրոսեան (60 տ.) տւած տեղեկութիւնները իրենց գիւղի մասին

Մեր գիւղը կը բաղկանար 73 տուն զուտ հայ և 2 տուն քիւրդ տուներէ: Քիւրդերէն մէկը (Հաճի Նաղիր) Մշեցի սպա մըն էր:

Գիւղի հին վիճակը: Մեր գիւղի հարստութեան մասին ստոյգ տեղեկութիւն չունեմ, իսկ ես՝ ունէի 4 եգ, 5 կով, 2 մատակ, 1 ձագ և 8 աճառ: Ոչխարը միայն մի տուն ունէր:

Գիւղի ներկայ վիճակը: Մեր եկեղեցին քարաշէն էր և կամարակապ (Ս. Յովհաննէս), որ ունէր «Կարմիր ատտարան» մը: Առնիստը հիմա ամայի է, թէև շէնքերը նոյնութեամբ մնացեր են, այդ ալ շնորհիւ այն բանի՝ որ քրդերը մուհաճիր³⁶ էին լեցուցած անոնց մէջ:

Պատերազմի ժամանակ մեր գիւղն ալ ենթարկեցաւ միևնոյն հարստահարութեանց՝ ինչ միւս հայ գիւղերը: Իսկ մեր հայ զինուորներէն բացի՝ (թիւր չգիտեմ) շատերս իբր շալակաւոր, մինչև Հասան-Ղալա կերթայինք:

Կոտորած և գաղթ: Մեր գիւղի զէնքերը բռնութեամբ իլլեցին Մուսա և Ղասրմ բէկերէն և հանձնեցան մեր գիւղի քրդերուն՝ մեզ պաշտպանելու համար: Իսկապէս անոնք առաջները կը պտտէին գիւղին մէջ՝ օտար յարձա-

34 Խոսքը, հավանաբար, Ղևերոյնու լեռնանցքի մասին է, որտեղով է անցնում Խարբերող-Դիարբեքի խճուղին:

35 Առնիստ՝ գյուղ Բիթլիսի նահանգի Մուշի գավառում: Գտնվում էր Մուշ քաղաքից մոտ 28 կմ արևելք: 1909 թ. գյուղում բնակվում էին 70 տուն հայեր:

36 Վերաբնակիչներ:

ԻԿ(Ը) փարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010
ՎԵՄ համահայկական համոզես

կումները արգելելու համար: Բայց Վարդավառի պահքը հանած, երկուշաբթի օրը, յանկարծ Մուսա բեկի քրդերը պաշարեցին գիւղը: Մենք անմիջապէս դաշտէն մեր տաւարներու հետ վերադարձանք գիւղը և պահուրտեցանք նախապէս շինած թաքստոցներու մէջ: Ուժգին հրաձանաձգութենէն յետոյ, քիւրդերը գիւղը լեցուեցան և թաքստոցներէն հանելով շատ տղամարդիկ, բոլորն ալ կոտորեցին: Գեղեցիկ կանայք ու աղջիկները բռնաբարեցին ու գերեցին: Մեր թաքստոցը բարեբաղտաբար չգտնուեցաւ: Այդ գիշերը մենք դուրս եկանք գիւղէն և դաշտի ցորեններու մէջ պահուրտեցանք: Այդպէս մենք մնացինք 12 օր, առանց հացի: Յորէնի հատիկներ կուտէինք և գիշերը գաղտագողի կերթայինք Սեդրագետէն ջուր կը խմէինք: Մեր գիւղի մնացած կիներն ու երեխաները ժողովեցին, տարան Ալգուտ գիւղը, ուր ռէս Մալխասի տունը լեցնելով՝ այրեցին...

Այդ գիւղի մէջ են այրած նմանապէս Դաշտի 36 գիւղերու կիներն ու տղաները:

Երբ ռուս բանակը Վարդենիս մտաւ, մենք հոն փախանք, բայց հազիւ ժամ մը մնացինք այնտեղ, որովհետև ռուսները կրկին նահանջեցին: Մենք անոնց հետ եկանք Խլաթ, Բաթնոց, Ալաշկերտ, ապա՝ Կովկաս: Չգիտեմ, թէ այժմ մեր գիւղէն ուրիշ ազատածներ ալ կան թէ՛ ոչ: Առայժմ ես և փոքրիկ Ֆարհատ որդիս կանք Առնիստ գիւղէն:

Հնո գրածները համաձայն են իմ տուած տեղեկութեանց.
Վասն անգրագիտութեան Յովհ. Պետրոսեանի՝ Ա. Հացագործեան

ՀԱԱ, ֆ.227, ց.1, գ.425, թթ.6-7շրջ., բնագիր, ձեռագիր:

N 5

ԱԿԱՆԱՏԵՍ ՏԵՐ ՂԵՎՈՆՂ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՍՏՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

4 օգոստոսի 1916 թ.

Աշտարակ

Ալաշկերտի Խաստուր³⁷ գիւղի քահանայ Տեր-Ղևոնդ Սահակեանի տուած տեղեկութիւնները իրենց գիւղի մասին

Նախկին վիճակը: Խաստուր գիւղը Ալաշկերտ գաւառի կարևոր գիւղերէն մէկն էր: Կը բաղկանար 200 տուն հայ բնակիչներէ, որոնցմէ 90 տունը՝ լուսաւորչական, 80 տունը՝ կաթոլիկ, 4 տունը՝ բողոքական, իսկ մնացեալները՝ Սիպեանցի³⁸ աշիրէթին պատկանող քրդեր էին:

Մեր գիւղի հայերն ունէին մօտաւորապէս 2000 հատ ոչխար, 1000 կով (մինչև 15 կով ունեցող տներ կային), 200 էգ գոմէշ, 200 գոյգ լծկան գոմէշ, 300 գոյգ էգ, 100 ձի, 50 էշ: Գիւղը տարեկան 8-10.000 սօմար հացահատիկ և 400 սօմար³⁹ կտաւատ կարդիւնաբերէր: Ունէինք 100-ի չափ գութան, որոնցմէ 30-40-ը՝ ռուսական սիստեմի, 200 սայլ և 3-400 արօր:

37 Խաստուր՝ գյուղ Էրզրումի նահանգի Բայազետի գավառի, Ալաշկերտի գավառակում, Ալաշկերտից մոտ 12 կմ հարավ-արևմուտք:

38 Խոսքը Սիպանի մասին է:

39 Մեկ սօմարը հավասար է 8 փութի:

Մեր գիտլի մէջ կային երկու եկեղեցիներ, մէկը կաթողիկոսներուն, միւսը լուսաւորչականներուն, երկուքն ալ քարաշէն, ծածկւած փայտով: Լուսաւորչականներու եկեղեցին առաջ եղած է վանք՝ Ս. Աստուածածին անունով, որ այժմ ալ կը պահէ իր ուխտատեղիի հանգամանքը՝ Աստուածամայ տօնին: Վանքն ունի 800 տարւան հնութիւն,⁴⁰ բայց գաւիթը նորոգւած է [18]62 թին: Յուրաքանչիւր եկեղեցին ունէր մի-մի քահանայ:

Միացեալ ընկերութիւնը⁴¹ վեցամեայ դասընթացքով դպրոց մը բացած էր մեր գիտլին մէջ, ուր կը սովորէին 200-ի չափ աշակերտներ: Դպրոցի գրադարանէն զատ՝ գիտլն ունէր Խալիբեան⁴² անունով գրադարան մը ևս:

Խաստուրի եկեղեցին 99 թին, Խանի⁴³ խմբի կոնիներու ժամանակ քալանւած լինելով, հին կարևոր ձեռագիրները արդէն տարւած կամ փճացւած էին, կը մնար 800 տարւան գրչագիր Աւետարան մը - «Կարմիր Աւետարան» - որ այժմ խաստուրցի Մխիթար Նազարեանի քովն է (Կովկաս): 1890 թին ալ Միացեալի տեսչի կողմէ բեռնագիր արձանագրութիւն մը հանւած, տարւած է Թօփրագ-գալէ⁴⁴:

Գիտլի ներկայ վիճակը: Այժմ Խաստուրի մէջ կապրին մօտ 150 տուն մեր գիտլացի հայեր, որոնց ընտանիքներու կէսը Կովկաս են: Կովկասի մէջ գտնուող խաստուրցիք կը գտնին հետևեալ գիտլերու մէջ. - Աշտարակ (15 տ.), Թալին (20 տ.), Մաստարա (20 տ.), Երևանի Թագա-գիտլ (15 տ.):

Հայերու զօրածողոյլը: Օսման. Սահմանադրութիւնէ վերջ մեր գիտլն ալ իրեն ինկած բաժին զինուորները տուաւ տարէ տարի (ճիշտ թիւը չգիտեմ), բայց զինուորութենէն խուսափողներ ալ շատ եղան: 914-ի Յուլիսէն վերջ, երբ ընդհ. զօրաշարժ եղավ, 18-45 տարեկան բոլոր հայերը մահուան սպառնալիքով զենքի տակ կանչեցան: Անէն մի հայ գիտլի մէջ 2-300 համիդիէներ դուրեցան՝ որոնք կապրէին գիտլերու հաշուով և կը հսկէին, որ զինուորացուները չփախչեն: Հայ զինուորները կը քշէին Սօսուն, Արծափ և Էրզրում, ուր քաղցէն և կարիքէն ստիպուած՝ Կովկասը կը փախչէին: Փախչողներու մեծ մասը գրեցան կամաւոր և երկիր վերադարձան: Թուրք բանակի մէջ հազար 9 հայ զինուոր մնացին, որոնցմէ ո՛չ մի լուր չկայ ցարդ: Թուրք կառավարութիւնը միայն նախապէս զինուորական ծառայութիւն կատարողներուն զենք կուտար, իսկ 914-ին կանչուածները բոլորը եղան ամալիա⁴⁵:

Պատերազմական փուրք: Բացի համիդիէները և անցորդ թուրք զինուորները կերակրելէ, Խաստուրը, իբր պատերազմական տուրք, տւած է նաև՝ գիտլի բոլոր ձիերը, 50 քէչա, 100 ձեռք անկողին, 100 հատ ժիլէտ, 200 գոյգ գուլպա, 100 սօմար ալիւր, 100 սօմար բուլղուր, 100 սօմար կորկոտ, 450 սօմար գարի, 30 փութ իւղ, 120 ոչխար, 30 սայլ՝ իրենց ընտրովի լծկաններով և այլն, և այլն:

Կառավարութեան և գերման սպաների վերաբերմունքը դէպի հայերը:

40 Ս. Աստվածածինը կառուցվել է Ներսես Շինող կաթողիկոսի կողմից (641-661 թթ.):
41 Նկատի ունի 1880թ. Կ.Պոլսում հիմնված «Միացյալ ընկերությունը հայոց» կազմակերպությունը:
42 Այդ անունով գրադարանները հիմնադրվել են առևտրական և արդյունաբերող Չարություն Խալիբեանի միջոցներով:
43 Խան (Բարսեղ Թիրաքյան, 1863-1903) հայդուկ, խմբապետ: 1899թ. Կարսից զինատար խմբով մեկնում է Սասուն, սահմանն անցնելուց հետո, Ալաշկերտի Խաստուր գյուղի մոտ, խումբը մատնվում է և պաշարվում թուրքական զորքով: Խանը հնտությանը է վարում կռիվը, որի ժամանակ զոհվում է նրա 28-ամյա եղբայրը:
44 Թոփրակալէ-Վաղարշակերտ ավանի թուրքական ամուկը:
45 Ձինապարտներ, որոնք բանակի թիկունքում գործածվում էին բեռնակրության կամ շինարարության համար:

914 թի Սեպտեմբերին, ռուս-թուրք պատերազմին քանի մը օր առաջ, երկու գերման սպաներ 80 հոգինոց քիւրդ չեթաներու գլուխն անցած՝ մեր գիւղը եկան: Գիւղի հայ ներկայացուցիչները գնացին դիմաւորութեան: Գերման սպաները ըսին անոնց. «Եթէ դուք չմիանաք գերման-թուրք դաշնակցութեան, ձեզ բոլորիդ կը կոտորենք: Արդէն Փարիզը գրաւելու վրայ է. շուտով Կարսն ու Թիֆլիսն ալ մեր ձեռքը կը լինեն: Ձեր կամաւորներուն յորդորեցէք, որ չկուեն մեր դէմ, ապա թէ ոչ՝ Կովկասի հայութիւնն ալ կը բնաջնջուի...»:

Ռուս-թուրքական պատերազմը սկսելուն և ռուս բանակի յառաջացման հետ՝ մեր գիւղի նեղութիւնները բազմապատկեցան: Նահանջող քիւրդ-թուրք զինուորները գիւղը լեցնելով՝ ցանկացած ուտելիքնին կը վերցնէին առանց փոխարհմութեան: Հայերս այն ժամանակ ապաստանած էինք մեր գիւղի 5 բէկերուն քով (Միսկեցի Աղալ աղի ցեղէն՝ Հասան աղա, Սատրգ, Ջիմշեղ, Շեքրի և Քազըմ եղբայրներ), որոնք, չնայած թուրքերու սպառնալիքներուն՝ պահեցին հայերս՝ մինչև ռուսներու գալը: Հոկտեմբերի սկզբին (1914 թ.), Ալաշկերտի գայմագամը մեր գիւղը եկաւ և հոն պատրաստի եղող 300 զինուորներով գիւղը պաշարեց: Նա սկսեց ծեծել քահանաներին ու տանուտէրը, որպէսզի գիւղի զէնքերը յանձնեն իրէն՝ ըստ շինած ցուցակի: Գայմագամը 50 օսմ. ոսկի կաշառք առնելով՝ բաւականացաւ գրաւած 26 հրացաններով և 15-ի չափ ատրճանակներով ու գնաց:

Հոկտեմբերի 21-ին ռուս բանակը մեր գիւղը մտաւ: Մենք, հայերս, մեզ պաշտպանող բէկերու տներէն դուրս գալով՝ խաչով-խաչվառով դիմաւորեցինք բանակը և ներկայացնելով մեր բարերար քիւրդ բէկերը, անոնց համար ներումն ստացանք:

Այդ անցուդարձի ժամանակ, մեր գիւղի քրդերը լեցւած էին մեր դատարկ տներ՝ անոնք իրենց փախուստի ժամանակ շատ բան թալանեցին մեզմէ: Ռուս բանակն ալ բաւական վնաս տուաւ մեր գիւղին. ամբողջ խոտերը անոնք կերցրին իրենց ձիերուն և մեր ձեռք բերած ոչխար-տաւարներէն շատերը մորթեցին, կերան ձրիաբար:

Գաղթ և կորոտած: [1914թ.] դեկտեմբերի 17-ին, ռուս բանակի նահանջին հետ, մենք ալ գաղթեցինք: Նախապէս ռուսները իրենց նահանջի մասին մեզ տեղեկութիւն չուէին: Մենք նախապէս նահանջի շուկներ լսած լինելով՝ երբ դիմեցինք հրամանատարին, նա մեզ պատասխանեց. «Գնացէք և տեղերնիդ հանգիստ նստեցէք, նահանջի լուրերը սուտ են»: Բայց այդ հաւաստիացումներու ճիշտ հետևեալ օրն էր, որ բանակը շարժեցաւ ... Մենք կրկին դիմեցինք հրամանատարին. «Ու՞ր կերթաք, մենք ալ գա՞նք» - հարցուցինք իրեն: «Ձեր գիտնալիքն է, եթէ կուզէք՝ եկէք» պատասխանեց մեզ, առանց հաստատուն բան մը ըսելու իրենց նահանջի մասին:

Հայերէն 12 տուն վստահանալով մեր բէկերուն, մնացին գիւղը, միայն անոնց երիտասարդները միանալով մեզ հետ, ձմրան այդ սառնամանիքին, բռնեցինք գաղթի ճամբան դէպի Իգդիր: Գիւղը մնացողները ուրիշ քրդերու յարձակման ժամանակ կոտորուած են: Ճանապարհին հարիւրաւորներ մեռան կամ սառեցան: Օրերով ձիւներու վրայ կը նստէինք, որովհետև գիւղերու տները բանակի զինուորներով բռնուած էին: Մուրադ գետը ո՛չ պակաս արգելք եղաւ մեր անցքին: Բանակը բռնած լինելով գետի անցքը, ամբողջ օր մը մենք ձիւներու մէջ կանգնած մնացինք:

Գաղթին յետոյ, քրդերը վառած են և կամ քանդած մեր տներու մեծ մասը, այրած են նոյնպէս կաթոլիկներու եկեղեցին: Վերադարձող խաստուրցիք փոխարինաբար քրդերու տները քանդելով՝ անոնց փայտերով վերաշինած են մասամբ իրենց տները:

Մեր գիւղի մասին գրած սոյն տեղեկութիւնները ամբողջովին համաձայն են իմ պատմածներուն:

Խաստուր գիւղի քահանայ՝ Տէր-Ղևոնդ Տէր-Սահակեան

Մեր գիւղի քահանայի տած այս տեղեկութիւններու ճշտութիւնը հաստատեմ:

Խաստուր գիւղի ռէս⁴⁶ Խաչատուր Սարգիսեան

ՀԱԱ, ֆ.227, ց.1, գ.425, թթ.1-5շրջ., բնագիր, ձեռագիր:

N 6

ԱԿԱՆԱՏԵՍ ՆՈՅՆՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՂՈՒՏ ԳԻՂԻ ՏԵՂԱՀՆԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

1916 թ.

Բարձրի Բ. որբանոց

Ախլաթու Թեղու⁴⁷ գիւղի կոտորածը
Պատմեց Նոյեմիկ Խաչատրեան, 12 տ.

ԽՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ 2010
Բ(Ը) ԿՊԱՐԻ, ԹԻՎ 1(29).

Թեղուն հայաբնակ մի գիւղ է մօտ 400 տուն բնակչութեամբ: Ինչպէս ամէն տեղ՝ մեր գիւղն ևս ենթարկուեցաւ չերքեզների յարձակման: Ապրիլի վերջերին մեր տղամարդիկ զենքերն առած լեռը բարձրացան ու նրանց հետ ութ օր շարունակ կուեցին: Նրանք մօտաւորապէս 30-35 անձ էին, իսկ իրանց դեկավարն էր թեղուցի Յակոբը (Բդօ): Երբ Ախլաթու թիրքերն իմացան, որ մեր գիւղի տղամարդիկ կենդանի են դեռևս ու դիմադրութիւն են ցոյց տալիս, նրանց մօտ գնացին ու խաբէութեամբ ցած բերին լեռներից, հաւատացնելով, որ նրանց ոչ մի վնաս չեն տալու: Հայրս թագնուէ էր Ս. Յովհաննէս վանքի⁴⁸ աղբիւրի ակի մէջ: Երբ գիւղացիք յանձնուեցան, նա էլ յանձնուեցաւ: Նրան հովիւ արին ոչխարների: Երբ նահանջ եղաւ, չերքեզները նրան տարին գերի իրենց հետ: Առաջին օրը մերոնց զենքերը գրաւեցին ու յաջորդ օրը նրանց ձեռքերը կապած, մեզ ևս նրանց հետ ծովափը իջեցրին, որպէսզի մենք ևս սկանառես լինենք այդ եղեռնին: Այնտեղ ամէնը գնդակահար սպանեցին ու ծովը ձգեցին: Մօտաւորապէս 30-35 հոգի, նրանց կոնակը դարձրին դէպի ծով, իսկ երեսները դէպի սպանողներին, ու իւրաքանչիւրին երկու-երկու գնդակ խփեցին: Նրանց մէջ էին մեր տանից իմ հօրաքրոջ տղայ Պետրոսեան Խոսրովը՝ 15 տ. և նրա հայրը՝ Սեմիօյի Գրօյի Պետրոսը: Ապա ինչ որ մնացել էին, - փոքրերը, կաղերն ու հաշմանդամները հաւաքեցին մի տուն, չորս օր անօթի թողին նրանց, յետոյ տարին ծովափը, կապեցին ծառերի ու գնդակահարեցին: Վերջին դէպքը պատ-

ՎԵՄ համահայկական համոզան

46 Ռես՝ գյուղապետ, տանուտեր:
47 Թեղուտ՝ գյուղ Բիթլիսի նահանգի, Բիթլիս գավառի, Խլաթ գավառակուն, Նեմրոթ լեռան հյուսիսային փեշերին, Խլաթ քաղաքից մոտ 8 կմ հարավ արևմուտք: 1895 թ. գյուղի հայ բնակչությունը ենթարկվել է ջարդի, 1915-ին վերջնականապէս ավերվել է:
48 Թեղուտի ս. Յովհաննէս վանքը կառուցված էր կոփածո քարերով: Ուներ տաճար, շրջապարիսպներ և օժանդակ շինություններ: Վանքի շինության ավարտը վերագրվում է 1592 թ.: Գործել է մինչև 1915 թ.:

մեզ մեզ մի թիրք, որ շարունակ լուրեր էր բերում մեզ:

Մեր ջահել, գեղադեմ կանանց ջոկեցին իրանց համար, մօտաւորապէս 10 հոգի տարան, որոնց մէջ էր ռէս Բոյոյի հարսը՝ Նուարդ, որ նոր էր պսակւած, իսկ տղեղ ջահելներին լցրին մի թիրքի տուն ու շէնքը այրեցին նրանց վրայ: Այդ տեղ էր և իմ մայրը, երբ չէրքէզները գնացել էին քարիւղ բերելու, մայրս պատեհութիւնից օգտուելով, փախաւ Սուլթանմուտ գիւղը, մի քանի օր վերջ ինքը և իմ երեք եղբայրը մի գիշերուան մէջ մահացան: Այրուեցին մօտաւորապէս 18-20 կանայք: Իսկ մեզնից – կենդանի մնացածներիցս – ծեծելով փող էին պահանջում: Ով ունէր կուտար, ով չունէր՝ անլուր չարչարանքի էր ենթարկվում: Երկու կանայք, ես անոնց չէի ճանաչում, որոնք փող չունէին տալու, նրանց վիզը չուան անցկացրին ու խեղդեցին իմ ներկայութեան: Այդ տեղից փախանք Սուլթանմուտ, ուր քրդեր ուզեցին փախցնել հօրաքրոջս հարս Ազնիվին: Նա ընդդիմացաւ: Մի թիրք հրացանով զարկաւ նրա սրտի մէջ, ու նա իսկոյն գետին գլորեցաւ: Իսկ նրա տղան՝ Ազատը, որ նրա գրկում էր, մօրը հետ գետին ընկաւ, բայց նրան վնաս չեղաւ: Այնտեղ մեռան մի շաբաթուն մէջ մեր եօթը երեխաները:

Յաջորդ օրը թիրքերը ռուսների Սուլթանմուտի մօտենալը լսելով, թողին մեզ ու նահանջեցին: Մի քանի շաբաթ Սուլթանմուտ մնալուց վերջ, երբ նահանջ եղաւ, մի կամաւոր և մի ռուս սալտաթ ինձ և հօրաքոյրս՝ իր երեխաներով, դրին ֆորպօնի մէջ, բերին Իգդիր ու այնտեղ ինձ յանձնեցին որբանոց:

ՀԱԱ, ֆ.227, ց.1, գ.468, ք.13 և շրջ, ձեռագիր: